

մնացած այդ հայաբաղաբն ալ ունէր գորգագործութիւն, որուն մէջ «նշանաւոր են Հայք»<sup>(55)</sup> :

Այսպէս Հայաստանի մէջ ամէն կողմ զանազան ժամանակներ՝ գորգարուեստը գոյութիւն ունեցած է որոշ չափերով: Տեղեր, ուր այժմ այդ արուեստը չի շարունակուիր, ժամանակին ունեցեր է նշանակելի գորգարտագրութիւն: Յաւալի է որ մեծ Աղէտէն առաջ մեր մօտ պահեր է արհեստներով հետաքրքրուող գրող մը, որ գոնէ որոշ չափերով մեզի տեղեկութիւն, հում, մշակելի նիւթ հաւաքած ըլլար եւ մեզի հասցուցած: Կովկասահայաստանը այդ ուղղութեամբ Թրքահայաստանէն աւելի բարերար է եղած: Ձարական իշխանութեան ատեն իսկ այդ նիւթերով հետաքրքրուողներ եղեր են, որոնք զանազան խումբակցութեանց քաջալերանքով ուսումնասիրեր եւ գորգարհեստի մասին իրենց հաւաքած տեղեկութիւնները հրատարակեր են, թէեւ պէտք է խոստովանիմ որ այդ աշխատութիւնները նախ ուսուերէն, եւ ինծի անմատչելի ըլլալով, ոչ մէկ կերպով օգտակար եղած են ինձ:

Աղբակի հայ կանայք ալ «կը գործեն զիմացկուն գորգեր, այլ եւ այլ գոյներով եւ ճարտարութեամբ»<sup>(56)</sup>: Խօջապի գաւառին հայ բնակիչները կը գրազին «ձմեռը զանազան ձեռագործներով, յորս նըշանաւոր են նախշուն (գոյնզգոյն) շալեր ու շալվարներ եւ ընտիր գորգեր, զորս արանցմէ աւելի իզական սեռն կը պատրաստէ»<sup>(57)</sup>: Ձաւախքի մէջ, «մի քանի զիւզական հասարակութիւնների մէջ զլիսաւորակէս կանայք պարապում են ոստայնանկութեամբ, գործում են տեղական բրդից կտաւ, շալ, գորգ եւն.»<sup>(58)</sup>: Պր. Ա. Սալբեանի կը պարտինք նկարը հայերէն ՄԻՔԱՅԷԼ ստորագրութեամբ 1890էն գորգի մը<sup>(59)</sup>:

Բուլանրիսի գաւառին մէջ, ինչպէս Շատախ եւ Վասպուրական եւ այլուր, հայոց մօտ բուրդ ներկել եւ հիւսուածեղէն պատրաստել շատ յառաջացած էր, այս մասին նիւթերու զլիսուն մէջ իր կարգին պիտի խօսիմ: Ղարաբաղի մէջ ժժ գարուն գորգաշինութիւնը Հայաստանի միւս մասերէն շատ աւելի յառաջացած էր: Սօթ կամ Զօթ գաւառի (Գեղարքունիք, Սեւանայ լճին եղերքը, Սիւնեաց աշխարհ, եւ այժմու Խորհրդ. Հայաստան), «կանայք գործում են գորգ (խալիչա) եւ կապերա, եւ իրենց որդւոց եւ մանկանց համար բրդեղէն զգեստ, ինչպէս Երնջակի գաւառացիք»<sup>(60)</sup>: Գողթան գաւառի հայք՝ մասնաւորաբար Փառակայ գիւղի «կանայք վարպետութեամբ գործում են գորգեր եւ կապերաներ»: Ասոնց տան «աչքի ընկնող մասը կազմում

(55) Պատ. Սերաստիոյ: — Ա. վ. Աղեքանդրեան: Վեներիկ, 1911, էջ 346:

(56) Նկարագրական ուղեւորութիւն ի Հայ Գաւառս: — Մ. Կ. Միրախորեան, Կ. Պոլիս, 1884, Բ. մաս, էջ 56:

(57) Անդ, էջ 18:

(58) Ձաւախք: — Ե. Լալայեան, Թիֆլիզ, 1897, էջ 99:

(59) Les Tapis A Dragon. — Paris, 1928. Նկար 5:

(60) Գեղարքունի: — Մեքրոպ Արքեպոս. Սմբատեանց, Վաղարշապատ, 1895, էջ 604: